արձանագրությունից տեղեկանում ենք, որ Տուտեորդին եղել է խաչենցի (արձ. 169), հավանաբար, իշխանական տնից, որովհետև վերոհիշյալ հիշատակարանի մեջ իրեն անվանում է «յազատ տանէ»։ Օրմանյանը իր «Ազգապատումի» մեջ Տուտեորդուն համարում է Օրբելյանց տան ազգական և Զաքարե և Իվանե եղբայրների քեռորդին։ Նա գրում է, որ Տուտեորդին մասնակցել է 1208 թվականին հրավիրված Լոռիի ժողովին, Զաքարեի առաջարկների ամենաեռանդուն դիմադրողն է եղել և ժողովից հետո Զաքարեի մարդկանց ծեծել է նա[1]։ Նույնը կրկնել է Աճառյանն իր Անձնանունների բառարանում[2]։

Այստեղ Օրմանյանը և Աճառյանը պարզապես շփոթության մեջ են։ Նրանք Հաղբատի Գրիգոր եպիսկոպոսին, որ, իրոք, Զաքարեի և Իվանեի քեռորդին էր և, ինչպես Ստեփանոս Օրբելյանն է ասում, 46 տարի եպիսկոպոսություն է արել, վերջում մեռել է Արփա գյուղում և թաղվել Նորավանքում հայոց 665 և մեր 1216 թ.[3], նույնացրել են Գրիգոր Տուտեորդու հետ, որ բոլորովին այլ մարդ է։ Տուտեորդին Լոռիի ժողովի ժամանակ արդեն մեռած էր, այդ մասին պարզ հիշատակություն ունի Կիրակոս Գանձակեցին։ Նա գրում է, որ Լոռիի ժողովին մասնակցել է ի թիվս այլոց, նաև Սանահնի վանահայր Հովհաննեսը։ Ուրեմն, Սանահնի վանքից ոչ թե Գրիգոր Տուտեորդին է մասնակցել, այլ վանահայր Հովհաննեսը, որ Գրիգոր Տուտեորդու մահվանից հետո հաջորդել է նրան։

Իսկ Հաղբատա վանքի կողմից, ըստ Կ. Գանձակեցու, Լոռիի ժողովին մասնակցել են Դավիթ Քոբայրեցին և «Գրիգորէս եպիսկոպոս Հաղբատայ»[4]։ Վերջինս ոչ թե Տուտեորդին է, այլ, ինչպես ասացինք, միանգամայն այլ մարդ։ Սա է, որ Օրբելյաններին ազգական է և թաղված է Նորավանքում, իսկ Տուտեորդու գերեզմանը Սանահնում է, և նա երբեք Հաղբատի առաջնորդ չի եղել։

Դժբախտաբար կորել է այս դեպքերի նկարագրությունը պարունակող Վանական վարդապետի պատմությունը։ Նրա աշակերտ Գանձակեցին վկայում է, որ «Զբովանդակ իրս զբան և զգործ այսմ ժողովոյս գրեաց մեծիմաստ և առատամիտ վարդապետն Վանական յիւրում պատմութեանն, զի ականատես էր նա իրացն եղելոց և ականշալուր, յաշակերտի կարգի գոլով յայնժամ առ մեծ վարդապետին (Մխիթարայ Գոշի)[5]։

Սակայն, Գրիգոր Տուտեորդին դեռևս իր երիտասարդության տարիներին, 1154 թվականին եղել է Հովհաննավանքի միաբան։ Թե երբ է նա Սանահին տեղափոխվել և ինչու, հայտնի չի, միայն կարելի է վստահ կերպով ասել, որ յոթանասունական թվականների վերջին նա արդեն Սանահնումն էր և ամիր Քրդի հետ միասին օժանդակում էր Ամենափրկիչ եկեղեցու նորոգման և ներքին ժամատան կառուցման աշխատանքներին (արձ. 12)։

Ամենափրկիչ եկեղեցու նորոգման պատճառը, հավանորեն, երկրաշարժներից նրա վնասված լինելն էր։ Այդ առթիվ թեև անմիջական տեղեկություններ մեզ չեն հասել, բայց Սանահնի վանքից ընդամենը մի քանի կիլոմետր հեռու գտնվող Հաղբատի մասին կան թե՛ արձանագրական և թե՛ մատենագրական տեղեկություններ։

Հաղբատի մի արձանագրությունից տեղեկանում ենք, որ 1016 թվականին Հոնավորի որդի Մուկը ս. Նշան եկեղեցու կաթողիկեն նորոգել է, «որ էր աւերեալ ի սաստիկ շարժմանէ»[6]։

Սամուել Անեցին գրում է.

«Ի ՇՁԸ (588+551=1139) թվին՝ ի ԺԷ (17) արեգ ամսոյ շարժմամբ կործանեցաւ Գանձակ քաղաք... եւ եկեղեցին Հաղբատայ փլուզանի...»[7]։

Սամուել Անեցին և Մխիթար Այրիվանեցին վկայում են, որ Մելիք շահի լավ

[1] Ազգապատում, գրեց Մաղաքիա արքեպ. Օրմանյան, հատ. Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 1576։

[2] Հր. Աճառյան, Անձնանունների բառարան, հատ. Ա, էջ 567։

[3] Պատմութիւն Նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպ. Սիւնեաց, Թիֆլ., 1910, էջ 343։

[4] Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, Թիֆլիս, 1909, էջ 162։

[5] Անդ, էջ 167—168։

[6] Այդ արձանագրությունը հրատարակված է Ղրիմ., էջ 3—4, Ջալ., 68, Երից., 87, Երզ., 45, Վիմական տարեգիրք, էջ 15։

[7] Սամուելի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 132։